ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Առեւտրի եւ ծառայությունների մասին» օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին», «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում» լրացումներ կատարելու մասին» եւ «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի (Պ-324-23.10.2019-ՏՏԳԲ-011/0) վերաբերյալ ներկայացված գրավոր առաջարկների

Հայաստանի Հանրապետության օրենքը «Առեւտրի եւ ծառայությունների մասին»				
Առաջարկության հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5
ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածի «2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ պարբերությունը» բառերն փոխարինել «2-րդ հոդվածի 9-րդ պարբերությունը» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 2-ին հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված Օրենքում լրացվող նոր՝ 5.2. հոդվածի 3-րդ մասում «նշանով» բառից առաջ ավելացնել «համապատասխան» բառը:	Ընդունվել է:	Ընդունվել է:

ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված Օրենքում լրացվող նոր՝ 5.4.-րդ հոդվածի 1-ին մասում «պետության և համայնքային սեփականություն» բառերը փոխարինել «պետության կամ համայնքային սեփականություն» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված Օրենքում լրացվող նոր՝ 5.2-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ. «Երևան համայնքի վարչական տարածքում շրջիկ առևտրի կետերի միջոցով վաճառքի կազմակերպման կամ ծառայության մատուցման գործունեությունն իրականացնում են միայն իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը՝ Երեւանի քաղաքապետի կողմից տրամադրված թույլտվության հիման վրա: Թույլտվության տրամադրման, մերժման կարգը և պայմանները սահմանում է Երևան համայնքի ավագանին»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված Օրենքում լրացվող նոր՝ 5.2-րդ հոդվածի 2-րդ մասում «ժամերը» բառից առաջ ավելացնել «թույլատրելի» բառը:	Ընդունվել է:	Ընդունվել է:

ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված Օրենքում լրացվող նոր՝ 5.2-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ. «Շրջիկ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը տրամադրվում են (հատկացվում են) բացառապես Երևանի քաղաքապետարանի կողմից հատուկ այդ նպատակով ստեղծված կայքէջի միջոցով՝ էլեկտրոնային ամրագրման եղանակով, իսկ դրանց հատկացման տևողությունը չի կարող գերազանցել օրական 14 ժամը և առավելագույնը մինչև ժամը 23:00»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված Օրենքում լրացվող նոր՝ 5.2 հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ. «Նշված վայրերում կարող են կայանել միայն համապատասխան թույլտվություն ունեցող շրջիկ առևտրի կետերը, որոնք շրջիկ առևտրի իրականացման համար տրամադրված (հատկացված) վայրը պարտավոր են ազատել սահմանված ժամը լրանալուց հետո»	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված Օրենքում լրացվող նոր՝5.3 հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը շարադրել հետևյալ	Ընդունվել է:	Ընդունվել է:

		խմբագրությամբ. «1) շրջիկ առեւտրի կետը չունի սույն օրենքի 5.2.-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված թույլտվություն կամ ւ շրջիկ առևտրի թույլտվություն ստացած անձը սահմանված ժամը լրանալուց հետո չի ազատել շրջիկ առևտրի իրականացման համար տրամադրված (հատկացված) վայրը. 2) տրանսպորտային միջոցի սեփականատերը կամ դրա փաստացի տիրապետողը անհապաղ չի ազատում տարածքը կամ բացակայում է նշված տարածքից:»:		
«Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք»				
ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում» լրացումներ կատարելու մասին» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի	Ընդունվել է:	Ընդունվել է:

		(այսուհետև՝ Օրենսգիրք) » բառերը փոխարինել «1985 թվականի դեկտեմբերի 6-ի Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ» բառերով:		
ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածում «Օրենքի» բառը փոխել «Օրենսգրքի» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում «շրջիկ առևտրի կետի միջոցով վաճառքի կազմակերպչի կամ ծառայություն մատուցողի» բառերը փոխարինել «շրջիկ առևտրի կետերում վաճառքի կազմակերպչի կամ ծառայություն մատուցողի կամ շրջածախ առևտրի միջոցով վաճառքի կազմակերպչի» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ ԱԺ պատգամավոր Վարազդատ Կարապետյան	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածով նախատեսված նոր՝ 2-րդ և 6-րդ պարբերություններում «առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով» բառերը փոխարինել «առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:»	Ընդունվել է:	Ընդունվել է:

ՀՀ ԱԺ պատգամավոր Վարազդատ Կարապետյան	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածում 10-րդ պարբերության մեջ «առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հիսունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով» բառերը փոխարինել «առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:»	Ընդունվել է:	Ընդունվել է: